Ավետիք Իսահակյան

Իմ սիրտն այնտեղ է

Իմ սիրտն այնտեղ է – հայրենի հզոր
Լեռների գըլխին, արծիվների մոտ,
Որ ամպերի հետ՝ խրոխտ, ահավոր
Նետում է, շնչում կայծակ ու որոտ:

Դո՛ւք ըմբոստ քաջեր, ռազմիկներ վսեմ,
Անհաղթ իշխողներ մահին ու կյանքին,
Ձեզ հետ է հոգիս, և ներբողում եմ
Եվ երկրպագում ձեր լուսե ուղին:

Դո՛ւք հայրենիքի խիզախ ոգիներ,
Ձեր սպառազեն կուռ բռունցքներում
Սուրբ իրավունքի և ազատության
Անշիջանելի հուրն է բռընկվում:

Իջե՛ք, մրրիկներ, դա՛շտն ի վար իջեք,
Մարդկության մրուր – նողկանքը սրբեք,
Փշրե՛ք շղթաներ, լծերը ամեն,
Որ կաշկանդել են ազնիվ մեր հոգին.
Անմահ մեր մտքի թևերը բացե՛ք, -
Պայթե՛ք, կայծակներ, պայթե՛ք խստագին:

1906